

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Երուսաղեմի հայ գրչութեան կենտրոնը 14րդ դարում. Ս.Հրեշտակապետաց

ՄՈՒՏՔ

Սրբոց Յակոբեանց գանձերի՝ 4000 ձեռագիրների մասին գրուել են տարբեր ուսումնասիրություններ, տասնմեկ հատորներով կազմուած են Ձեռագրացուցակները: Սակայն ձեռագրերի մասին ուսումնասիրությունները, նրանցում ամբարուած ծով տեղեկությունների շնորհիւ, մէկէն սպառել անհնար է, դրանք կարելի է միայն սկսել ու անվերջ շարունակել:



Տարբեր աղբիւրներ թերթելիս շարունակ աչքի էին զարնում ձեռագրեր, որոնց գրչութեան վայրը Երուսաղեմի հայոց այս կամ այն եկեղեցին է: Այդ տուեալները փորձեցինք ի մի հաւաքել, եւ արդիւնքում մեր առջեւ բացուեց միջնադարեան Երուսաղեմում գրուած, կազմուած, նկարազարդուած, նորոգուած, նուիրուած տասնեակ թղթեայ ու մագաղաթեայ ձեռագրերի մի գեղեցիկ հարստութիւն: Ընդ որում, որոշ տասնամեակներին կամ որոշ դարերին, ինչպէս 14-րդ դարում է, Երուսաղեմում ստեղծուած հայերէն ձեռագրերը ուղղակի խտացուած փունջ են կազմում:

Ահա այս փաստն է, որ հարցը մի փոքր մանրամասն դիտարկելու առիթ տուեց:

Շտապում ենք յայտնելու, որ մօտ մէկամեայ մեր պրպտումների արդիւնքում հաւաքուեց 14-րդ դարում Երուսաղեմում գրուած հայերէն ձեռագրերի մի պատկառելի ցանկ՝ բաղուած ձեռագրացուցակներից, տարբեր աղբիւրներից ու գրականութիւնից: Եւ ոչ պատահական գուգադիպութեամբ այս ձեռագրերից ումանց ստեղծման վայրը հայոց Ս.Հրեշտակապետաց եկեղեցին է: Այսիքնքն՝ մեր օրերից 700 տարիներ առաջ, 1300-ական թուականներին, յատկապէս դարի կէսին, գողտրիկ այս եկեղեցում գործելիս է եղել կազմակերպուած գրչագրական կենտրոն:

Ներկայ յօդուածում պէտք է փորձենք համառօտաբար ներկայացնել, թէ իրենից ինչ էր ներկայացնում Ս.Հրեշտակապետացի ու առհասարակ Երուսաղեմի հայ գրչութեան կենտրոնը 14-րդ դարում:

ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ

Հայոց գրերը Մեծ Հայքում տարածուելուց անմիջապէս յետոյ դպրութիւնը «հասաւ» Երուսաղեմ: Բազմաթիւ վկայութիւնների հիման վրայ կարելի է ապացուցուած համարել, որ հենց հինգերորդ դարից Երուսաղեմում կատարուել են հայերէն թարգմանություններ, գուցէ՝ հայերէն է ուսուցանուել տեղիս հայկական միջավայրում: Ահա այդ մասին մի քանի փաստեր:

Ա) «Կարգաւորութիւն օրհնութաբեր ցուցակի» անունը կրող յիշատակաբանը, որ կցուած է Մայր Մաշտոցին, պահպանել է թարգմանական գործունէութիւնը Երուսաղեմում ծաւալած Կորիւնի, Խոսրովի, Ընձակ (այլ տարբերակով՝ Արջեւան) թարգմանիչների մասին կարեւոր տեղեկություններ:

«Իսկ զկանոն ջուր օրհնելոյն Սրբոյն Բարսղի է արարեալ յեթներորդն ամի հայրապետութեան իւրոյ ի Կեսրաիա Կապադովկիացոց, եւ յԵրուսաղեմ Բաղաթի Ի հոսանս Յորդանանու հանդիպեցաւ Խոսրով թարգմանիչ... եւ անդ գրեաց եւ երբ ի Հայս»: «Իսկ Ապաշխարողաց կարգել եւ արձակել ի մեծի Հինգշաբթուոյն երանելոյն Կիրդի Երուսաղիմացոյ գրեալ... ի դուռն Սրբոյն Սիոնի, Ընձակ եւ

Կորիւն քարգմանիչ բերին» (Զեռագիր Սուրբ Յակոբեան Մատենադարանի, թիւ 652, էջ 492-495)¹:

Բ) Մովսէս Խորենացին Հայոց Պատմութեան Դիրք Բ.ԿԲ-ում խօսում է Պաղեստինի մէջ գործունէութիւն ծաւալած Մովսէս Թարգմանչի մասին եւ ասում՝ «Անցա՛ւ ի սուրբ տեղիսն երկրպագել եւ մնալ վայրկեան ի պաղեստինացոց հրահանգս»: Եթէ Մովսէս քարգմանիչը նոյն ինքնը Խորենացին է, ուրեմն Երուսաղէմում հայ գրերի տարածողներից մէկը եղել է Պատմահայրը:

Գ) Կարեւորագոյն աղբիւրներ են Երուսաղէմի այս կամ այն վայրում պահպանուած հայկական մոզաիկ հոյակապ նկարներն ու արձանագրութիւնները, որոնց մի մասը գալիս են ուղղակի 5-6-րդ դարերից:

Երուսաղէմի հայ դպրութիւնը ուշ դարերում եւս մի քանի կարեւոր արդիւնքներ է տուել: Դ) 10-րդ դարում հայագգի Յովհաննէս Բժիշկը Երուսաղէմ կատարած այցին, ըստ յիշատակարանների, քարգմանում է «Պատմութիւն Սրբոյն Դէռնիսիոսի» գիրքը. «Այս պատմութիւն Սրբոյն Դէռնիսիոսի ի սուրբ քաղաքն Երուսաղէմ էր քարգմանեալ ի յունականէն ի վիսիականն, իսկ ի մերս քարգմանեաց Յովհաննէս Բժիշկ, ՅԻԹ (880թ.) թուականիս Հայոց» (Մկ. Աղաւնունի, Միաբանք եւ Այցելութ Հայ Երուսաղէմի, էջ 354):

Ե) Հաննէ Եպս. եւ Մկրտիչ Աղաւնունին ենթադրում են, որ Մարինոս Պատմիչի յիշատակած Հայոց Սիմէոն Պատրիարքը (1090-1109) հեղինակն է Երուսաղէմում կատարուած անվանական Աղամ Գրքի քարգմանութեան, յենուելով այդ գրքին կից մէկ փաստի վրայ՝ «...Ձոր քարգմանեաց հոգեւոր տէրն Սիմէոն յԵրուսաղէմ»:

ԵՐՈՒՍԱԼԵՄՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԱՍԵ ԵՐԿԵՐ

Պատմական ստույգ փաստերի եւ որոշ աւանդութիւնների համաձայն, Երուսաղէմում կատարուած քարգմանութիւններից բացի, հայ հեղինակները տարբեր դարերում գրել են նաեւ ինքնուրոյն երկեր:

Ըստ աւանդութեան, *Դաւիթ Անյաղթն* իր «Բարձրացուցէ՛ք» ճառը խօսել է «յԵրուսաղէմ, ի Գողգոթային յաւուր Խաչվերաց տօնին» (Դիրք Պատմառաց, Ցուց. ձեռ. Յ.Տաշեանի, էջ 232): Շատ հնարաւոր է, որ Անյաղթն այստեղ էլ գրի է առել իր ճառը:

13-րդ դարից պահպանուել են *Գրիգոր Երուսաղէմացիի* հեղինակած երկու երկեր. ա) «Սկիզբն իմաստասիրութեան» (ձեռ. Փարիզի Ազգ. Մատենադարանի, CMA, էջ 155-156), բ) «Սահմանք գանազան, արտորոշեալք ըստ Սրբոց եւ ծայրագոյն վարդապետաց...», որ քաղուածք է Դաւիթ Անյաղթից ու Գրիգոր Նիսացիից (ըստ էջմ. ձեռ. ցուցակի, թիւ 295 Տօնապատնառի):

Վարդան Վրդ. Արեւելցիին 1321 թուականին մօտ 60 տարեկան հասակում այցելում է Երուսաղէմ, տնօրինական Սուրբ Տեղերում շրջագայելուց յետոյ տեղի կրօնաւորների խնդրանքով յօրինում «Սուրբ Տեղեաց Աղօթագիրքը»: ՉՍՅ 939-ի յիշատակարանում Գրիգոր Նչեցի գրիչը սոյն «Աղօթագրքի» մասին գրում է. «Ես մեղաւորս դեռ է գնացեր յԵրուսաղէմայ տեսայ զայս, խիստ ուրախացայ եւ առի գօրինակն եւ քերի ի Սր. Առաքեալք ըզմիւ եւ փափագեալք գրեցի...»: Այսինքն՝ ստեղծագործութիւնը գրուել ու ձեռագիրը որոշ ժամանակ պահպանուել է Երուսաղէմում: Բանասերների մի մասը, սակայն, իբրեւ այս գեղեցիկ ստեղծագործութեան հեղինակ են համարում *Վարդան Վրդ. Այգեկցուն*:

Սեզ հետաքրքրող 14-րդ դարում, 1373թ.-ին Երուսաղէմ է այցելում *Գրիգոր Տաթեւացիին*, իր ուսուցիչ Գրիգոր Որոտնեցու հետ, ուր եւ ստանում է կուսակրօն քահանայութեան կարգը: Նոյն թուին Տաթեւացին Երուսաղէմում, ըստ Բիւկայի (Ակն) Ս.Հրեշտակապետաց եկեղեցու մէջ պահուած Աւետարանի, գրում է հետեւեալ յիշատակարանը. «Ով եղբայր, գլիշատակարանս յետոյ գրեցի

¹ Այսուհետեւ՝ ՉՍՅ, ըստ անհրաժեշտութեան կնշուի նաեւ ձեռագրի թիւը, էջը եւ այլն:

յերուսաղէմ՝ Ս.Քաղաքի եւ կարի արտոքանօք ի մեծի հինգշաբթուոյ աւուրս» (Աղանունի, Միաբանք, էջ 103):

ՆԱԽԸՆԹԱՑ ԴԱՐՆԵՐ

Մինչեւ 14-րդ դարը Հայ Երուսաղէմի ուսումնական, մատենագրական կեանքը, ինչպէս ցոյց տրուեց, կապուած է Խորենացիից ու Անյաղթից մինչեւ Գրիգոր Տաթևացի: Ու քնական պէտք է դիտել գրական այսպիսի միջավայրում նաեւ գրչութեան արուեստի զարգացած վիճակի առկայութիւնը:

Երուսաղէմում գրուած ձեռագիրներից ամենահինը, որ հասել է մեր օրերը, 1215 թուականի ձաղընտիրն է: Ընդօրինակող-կազմողը՝ Յովհաննը, ձեռագրի յիշատակարանում գրում է. «Գրեցաւ... ի քաղաւորութեան Հայոց Լեւոնի, ի վերջացեալ եւ ի նուագեալ դառն ժամանակի, յաւուրս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Յովհաննէսի (Յովհաննէս Զ Սսեցի, 1203-1221թթ.) Հայոց կաթողիկոսի, *յաշխարհս Պաղեստին ի մէջ գերութեան Երուսաղէմի...*»: Գիրքը գրուել է Յովհաննէս ճգնաւորի փափագով, Բեթղեհեմի Ս.Աստուածածին տաճարին ընծայելու համար, իսկ գրչութեան վայրն է՝ «*արտաքու Երուսաղէմի, համդէպ Սուրբ Սիոնի ի վերայ ճանապարհին Բեթղեհեմի, որ է լեալ հանգստարան Ս.Աստուածածնի*, մինչ գայր յընծայումն ի տաճարն աստուածացեալ մանկամբն Յիսուսի Քրիստոսի...» (այս մասին տես Սիոն, 1927, էջ 109-112):

Հնագոյն այս ձեռագիրն այժմ Վեներական Մատենադարանում է, թիւ 204:

1215 թուականին յաջորդ ձեռագիրը, ըստ մեր տուեալների, գրուել է 1311 թուականին, Ս.Յակոբում:

Թէեւ մօտ 100 տարուայ ժամանակամիջոց բաց է մնում, սակայն մի հետաքրքրական հանգամանք ցոյց է տալիս, որ 13-րդ դարում նոյնպէս Երուսաղէմի հայ միջավայրում ու Ս.Յակոբում գրչութեան արուեստը ամենեւին անտեսուած չէր: 14-րդ դարի տարբեր գրիչներ բազմիցս ակնածանքով յիշատակում են, թէ ինչպէս իրենք տուեալ ձեռագիրը ընդօրինակել են «*ի լաւ եւ յընտիր օրինակէ...*»: Պահպանուել է հայ գրչութեան երեւելի դէմքերից Ստեփանոս Գոյներիցանց (կամ՝ Գոյներ Երիցանց) գրիչ եւ ծաղկողի անունը, որի Աւետարանը միջնադարեան տարբեր սերունդների գրիչների մօտ անվերապահ հեղինակութիւն էր եւ ընդօրինակման համար յոյժ փնտրուած: Եւ ահա Երուսաղէմում եւ Ս.Հրեշտակապետացում ընդօրինակուել են Գոյներիցանցին պատկանող Աւետարաններ եւ ձաշոց: 1358թ. Ս.Հրեշտակապետացում գրուած Աւետարանի գրիչ Տէր Աւագ Քահանան այդ մասին գրում է. «(գրեցաւ) ի լաւ եւ յընդիր արիւնակի, որ գրած էր Ստեփանոս Գոյներ Երիցանց, այն որ լի՛ էր եւ պատարուն յարուեստ գրչութեան եւ ընդ քնաւս հոշակեալ. նաեւ բանիւ կատարեալ եւ հոգեով լցեալ...»: (Յուց. հայ. ձեռ. Հալէպի, 1935թ., էջ 111):

Հեղինակաւոր գրիչներից յիշատակուած են նաեւ Կարապետի, Յորկցի անունները, մի փոքր ուշ՝ Երուսաղէմի գրիչ Ստեփանոս Երկայնը, որոնց գրչագրուածները նոյնպէս մեծ հեղինակութիւն են ունեցել:

Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ մինչ 14-րդ դարն էլ առօրեայ արարողութիւնների համար անհրաժեշտ մատենաների հետ մէկտեղ Երուսաղէմում խնամով պահպանում էին շքեղ ձեռագրեր, գուցէ նաեւ բազմացնում էին դրանք: 13-րդ դարի Կիլիկեան Հայոց պետութիւնն ու հոգեւոր ծաղկուն դարձող, մշակութային ու քաղաքական շփումների շնորհիւ, բարերար ազդեցութիւն էր բողոքում Երուսաղէմի վրայ:

Իսկ աւելի հին՝ նախքան 13-րդ դարը Երուսաղէմեան գրչագիր ձեռագրերի յայտնագործումը մնում է ապագային:

ԳՐԻՉՆԵՐ

14-րդ դարի Երուսաղէմեան ձեռագրերի գրչագրական արուեստը միւս դարձումների համեմատ մեծ տարբերութիւններ չի դրսեւորում: Գրչագրերում

տարածուած տառատեսակն էր բոլորգիրը, հիմնականում՝ միասին գրութեամբ, առանց շոյալ գունաւորումների ու մանրանկարների:

Գրիչների մի մասը այլ վայրերից Երուսաղէմ եկածներ էին (Սեբաստիա, Ղրիմ, Սանահին, Ակներ, Կիլիկիա եւ այլն), որոնք հանգամանքների բերումով ապրել ու ստեղծագործել են այստեղ: Այդպէս հնարաւորութիւն էր առաջանում գրչական տարբեր դպրոցների նուանումները գուգորդել:

Երուսաղէմի գրիչների ձեռագրեր ընդօրինակելու մղումը նախ եւ առաջ պայմանաւորուած էր ոչ թէ պատուէրով ու վարձով աշխատելով, այլ ազնիւ նուիրութեամբ: Այդ մասին են վկայում Ներսէս Կրացին. «Եւ *գրեցի ազատարարոյ կամօք եւ ոչ վարձու*, եւ աւանդեցի Սր. Յակոբայ եկեղեցւոյն, զի կացցէ առաջի Սր. Յակոբայ...» (1331թ.), նաեւ՝ Կարապետ Վարդապետը. «Յիշեցէք ի մեղաց թողութիւն գաշխատող տառիս, որ *գրեցի ազատարարոյ կամաւք եւ ոչ վարձու*» (1341թ.) եւ այլ գրիչներ: Առանձնապէս նոյն չեն եղել նրանց աշխատանքի պայմանները: Նոյն Ն.Կրացի գրիչը 1331թ. գրում է. «Դող ու տաճարին ունի զիս ի գրելս, մեղայ Այ., ու խելք չկայ»: «Այսաւր բորբսած հաց եմ կերել եւ ջրհորի կրաջուր խմել եւ գրել յԵրուսաղէմ քաղում վշտով», նշում է Վարդան Սր. Ղրիմեցին (1367-69):

14-րդ դարում Երուսաղէմում ստեղծագործած տեղացի եւ դրսեկ գրիչները հետեւեալներն են, ժամանակագրութեան կարգով.

Յովհաննէս Գրիչ Սանահնեցի—պահպանուել է 1311թ. գրած մէկ ձեռագիր

Ստեփանոս Երկայն—1314, 1316, 1321 թթ.

Ներսէս Արեղայ Կրացի—1321 (2 ձեռագիր), 1331, 1334, 1335, 1341

Թորոս Վարդապետ Գրիչ—1322

Կարապետ Կրօնաւոր—1331

Կարապետ Արեղայ Տիւրքիկեցի—1331

Կարապետ Վարդապետ—1332 (2 ձեռագիր), 1341

Յովհաննէս Գրիչ «Շարպաթեկեցի»—1336, 1339

Յովհաննէս Արեղայ—1354

Մանուէլ Քահանայ—1352

Ստեփանոս Երէց, Կրօնաւոր—1355, 1360, 1360 (2 ձեռագիր), 1363

Տէր Աւագ Բահանայ—1358

Մարտիրոս—1358

Աստուածատուր Կրօնաւորներ—1360,

Գրիգոր Գ Պատրիարք Երուսաղէմի—1360

Կիրակոս Գրիչ—1363

Գրիգոր Ակներցի—1367

Վարդան Արեղայ Բաբերդցի Ղրիմեցի—1366, 1367-69, 1372

Գէորգ Գրիչ—1382,

Ստեփանոս Սեբաստացի—1390

Կարապետ Եկեղեցացի—1397

Սահակ Արեղայ Ղրիմեցի—1398

Սարգիս Պատրիարք Երուսաղէմի—1399:

1330-ական թուականների Կարապետ Վարդապետ, Կրօնաւոր, նոյն անձն է, մինչ Մկ.Աղաւնունին երեք տարբեր անձեր է դիտում: Նոյնն անձն է նաեւ 1360-ականների Ստեփանոս Երէցն ու Կրօնաւորը, սակայն ոչ 1390թ. Ստեփանոս Սեբաստացին:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

Երուսաղէմի ու Ս.Հրեշտակապետացի 14-րդ դարի ձեռագրերի մասին գիտական գրականութեան դիտարկումից յետոյ տպաւորութիւն է ստեղծուում, որ դրանք մանրանկարչութեան տեսակետից զիջում են նոյն շրջանում Հայաստանի եւ մանաւանդ Կիլիկիայի գրչութեան դպրոցների գործերին: 14-րդ դարի

Երուսաղեմեան ձեռագրերի մեծ մասում կամ բացակայում են մանրանկարները, կամ լուսագոյն դեպքում սահմանափակուած են միայն լուսանցազարդերով, կիսախորաններով, գլխագիր զարդերով, որոշ փոքր ու ոչ բազմագոյն նկարներով:

Այս պարագան իր մեկնաբանութիւնն ունի:

Նախ, Երուսաղեմում ձեռագրերը ստեղծուում էին հստակ գործնական կիրառութեան համար², եւ առաջին պլանի վրայ ամենեւին ձեռագրի նոխու-թիւնը չէր: Եւ յետոյ, այստեղ պատուիրատուները կաթողիկոսները, արքաներն ու արքայական տան անդամներ չէին, ինչպէս Կիլիկիայում, այլ հիմնականում հոգեւորականները՝ որեւէ գիրք բազմացնելու եւ եկեղեցիները դրանցով հարստացնելու ազնիւ ցանկութիւնից դրդուած:

Բացի այդ, 14-րդ դարում, ինչպէս նշում են մասնագէտները, հայ մանրանկարչութեան մէջ որոշակի անկման միտում սկսուեց: «Սելուգեան շրջանին արուեստի գործունէութիւնը դանդաղած, նոյնիսկ կանգ առած էր, եւ կը վերսկսի ԺԳ դարուն...», գրում է հայ մանրանկարչութեան յայտնի մասնագէտներից Սիրարփի Տէր Ներսէսեանը: Ապա՝ «ԺԳ դարուն ընտիր եւ գիտուն արուեստը կ'երեւի ԺԴ դարու սկզբի քանի մը ձեռագիրներու մէջ միայն, սակայն ներշնչումի աղբիւրը կը թուի ցամաքած ըլլալ» (Ս.Տէր Ներսէսեան, Հայկական մանրանկարչութիւնը, Երուսաղեմ, 1969, էջ 35):

Սակայն եւ Երուսաղեմի հայ ձեռագրերը ամենեւին զուրկ չեն արուեստականութիւնից: Հիմնականում այլ վայրերից Երուսաղեմ եկած ծաղկողները հայ մանրանկարչութեան աւանդութեան հետեւողութեամբ զարդանկարում էին ձեռագրերը: 1331թ. Ս.Հրեշտակապետացում գրուած Հառընտիրի ծաղկողն է *Յովհաննէս Ար. Գունեցի*ն, 1332թ. նոյն եկեղեցում գրուած Սելուգեան Կաթողիկէ Թղթոց Սարգիս Վրդ.-ի ձեռագրի ծաղկողն է *Ներսէս*: Որոշակի ժամանակ Երուսաղեմում է գործել նաեւ գրիչ եւ ծաղկող *Վարդան Ար. Բաբերդցի Դրիմեցի*ն, ծաղկող *Տաւադան Կրօնաւորը* եւ այլք:

ԳՐԶՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՆԵՐԸ

Գրչութեան արուեստի զարգացման համար մեծ նշանակութիւն ունէր նպաստող մթնոլորտը միաբանութեան մէջ: Այդ մթնոլորտի ստեղծողները նախ պէտք է լինէին Պատրիարքները: Եւ բարեբախտաբար դարիս պատրիարքների մեծ մասը գրի եւ գրչութեան հետ անմիջական կապ ունեցող անձինք են եղել: Նոյնիսկ նրանցից երկուսից՝ Գրիգոր Գ (1356-1363) եւ Սարգիս (1394-1415) Պատրիարքներից ընդօրինակուած ձեռագրեր են հասել մեզ: Իսկ Դաւիթ Պատրիարքի (1316-1321) մասին կայ հետեւեալ յիշատակարանը, որ ցոյց է տալիս նրա նախանձախնդիր վերաբերմունքը մատենաներ բազմացնելու հարցում. «Յամի ԶԿԵ (1316) գրեցաւ ժամագիրքս հրամանաւ Տէր Դաւիթի մօր... վասն այնորիկ գրեցի զայլ աւելի կարդացմունքդ, զի *յորժամ պատահեցեն ի տնօրինական սուրբ տեղիսն Բրիստոսի, առձեռն պատրաստ գտցեն զամենայն աւուր*» (Տ.Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղեմի, 1-ին հատ., էջ 511):

14-րդ դարի սկզբին Երուսաղեմի հայոց եկեղեցիներում, առաջին հերթին՝ Ս.Հրեշտակապետացում գործում էին ձեռագրեր պատրաստող արհեստաւորական խմբեր՝ մագաղաթ պատրաստողներ եւ թուղթ կոկողներ, թուղթը գծողներ, կազմողներ, վերականգնողներ, գրիչների օգնականներ եւ այլն, որոնց բարեպաշտ աշխատանքի գովքն անպակաս է ձեռագրերի յիշատակարաններում: 1398թ. Հառընտիրի (ԶՍԶ 73) գրիչ Սահակ Ար. Դրիմեցի իր շնորհակալական խօսքերն է

² Իրրեւ ծանօթագրութիւն պէտք է ասել, որ 1833 թուականից Զաքարիա Պատրիարքի հիմնադրած տպարանից թեւ ղուրս էին գալիս գրական, քանասիրական, պատմական, քաղաքական րովանդակութեան գրքեր, սակայն գերակշռողը հոգեւոր-կրօնականն էր: Առաջին տպագիր գիրքն էր «Տեսութեան Աղօթաւատոյց»: Հայ եկեղեցու համար հոգեւոր գրականութեան մշտական երատարակումն ու բազմացումը Երուսաղեմի հայ միաբանութեան գեղեցիկ առաքելութիւնն է՝ ընդհուպ մինչեւ 20-րդ դարը եւ մեր օրերը:

ասում Ս.Յակոբի փակակալ Յովհաննէսին, Մարտիրոս եւ Մատթէոս Արեղաներին, որոնք «ի թղթին կոկեմ աշխատեցան», եւ Ստեփանոս Արեղային, որ «ի թղթին խագելն աշխատեցաւ», նաեւ՝ «կոկաղ նիւթիս զՄարտիրոս պատուական ֆահանայ»:

Իսկ ձեռագրերը կազմողներից, որոնց աշխատանքը սովորաբար անկատ է մնում պատմութեան համար, առաւել շատ հանդիպում է Մատթէոս Քահանայի անունը: Ըստ ձեռագրերի տուեալների, նա 1315թ. Երուսաղէմ է գալիս Դարանաղի գաւառից եւ մինչեւ 1341թ., որ գուցէ կեանքի աւարտն է, բազմաթիւ ձեռագրեր է կազմում կամ նորոգում Երուսաղէմի գրեթէ բոլոր եկեղեցիների համար, որոնցից պահպանուել են վեցը:

ՁԵՌԱԳՐԵՐԸ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐԵԻՈՐ ԱՂԻԻՐՆԵՐ

Երուսաղէմեան ձեռագրերը մշակութային արժեք լինելուն զուգահեռ տալաւին շարունակում են մնալ իրրեւ պատմական կարեւոր աղբիւրներ: Երուսաղէմի մասին պատմութեան բոլոր հեղինակները, այդ թուում Հաննէ Եպս.-ը, Տիգրան Սաւաւանեանը եւ այլք իրենց աշխատութիւնները գրելիս մեծապէս օգտուել են ձեռագիր յիշատակարանների տուեալներից:

Տոյց տալու համար, թէ իրօք որքան մանրամասն փաստեր են պարունակում յիշատակարանները, բերում ենք մէկ-երկու օրինակ, որ չեն հանդիպում ժամանակագիրների մօտ: Կարեւոր է այն, որ գրիչները բոլոր դէպքերում ժամանակակից են իրենց նկարագրած դէպքերին:

1390թ. Լեոնակոզման Ս.Յովհաննէս եկեղեցում գրուած Մաշտոցի գրիչը՝ Ստեփանոս Սեբաստացին յիշատակում է. «Ի թվ. ՊԼԸ ապրստամբեցին Հալապայ եւ Դմըշխայ եւ այլ բազում պարոնյաք ի սուլտանէն, որոյ անունն Պարխուխ էր, եւ ազգաւ չարֆաշ, ծառայ եւ բազում ամբոխիւ եւ հեծելով բովանդակ Շամայ, մտին յեգիպտոս, եւ ընկեցին զսուլտանն զՊարխուխն յաթոռոյն, եւ յուղարկեցին կապանաւ ի Քարաֆ, եւ իւրեանք շփոթեալ ընդ միմեանս հակառակեցան. եւ կալաւ մինն զամենեւեանն եւ եղ ի բանտի: Եւ լուեալ բազմաց՝ խռովեցան, եւ կրկին հանին սուլտանն ի բանտէն, եւ ի թվ. ՊԼԹ, տիրեաց կրկին աթոռոյ իւրոյ: Եւ այս եղեւ ի նախախնամութենէն Այ., զի բարեմիտ էր առ ամ. ազգս, եւս առ աւել առ ֆրիստոնեայս» (ՉՍՅ 661, էջ 52ա):

ՉՍՅ 299-ը կենդանացնում է 14-րդ դարի կեսերին Ս.Հրեշտակապետացի կեանքը. «Գրեցաւ... առ դրան Սուրբ եւ փառաւորեալ տաճարի Քի. ի ֆաղափս յաստուածակոխ յեմս. ի վանքս որ կոչի Հրեշտակապետք», ապա գրիչը տալիս է միաբանութեան բոլոր անդամների անունները, յիշում է քնակիչներին, նրանց թուում՝ Թորոս խոստովանաւորը, իր ուսուցիչ Կիրակոսին, Ս.Յակոբի փակակալ Յովհաննէսին, թուղթ կոկող Մանուէլին, չուիակ Ստեփանոսին՝ ընդամենը 26 հոգու:

ՉՍՅ 73-ի (1398թ. Ճառընտիր) գրիչ Սահակ Ար. Դրիմեցի յիշում է Երուսաղէմի եպիսկոպոսին՝ Տէր Սարգիս, ձեռագրի օրինակը տուող՝ Ս.Յակոբի փակակալ Յովհաննէսին, Մարտիրոս Արեղային, Մատթէոս Արեղային, որոնք «ի թղթին կոկեմ աշխատեցան եւ Ստեփանոս Արեղային, որ ի թղթին խագելն աշխատեցաւ», յիշատակում է նաեւ «կոկաղ նիւթիս զՄարտիրոս պատուական ֆահանայ, եւս առաւել այնոցիկ, որք զնիւթ գրոցս պատրաստեցին. եւ համարէն միեղէն եղբայրութեան Ս.Փրկչիս...»: Ս.Փրկչի վանքը համարում է Անապատ՝ «ի յԱմանապատս Ար.Փրկչի, որ է տեղիք չարչարանաց Քի յոսոյն մեր»:

Ջանադիր ուսումնասիրողը այս եւ նման յիշատակարանների հիման վրայ կարող է վերականգնել ոչ միայն պատմութեան շատ մանրամասներ ու նրբութիւններ, այլեւ 14-րդ դարի Երուսաղէմեան հոգեւոր ու աշխարհիկ նւիրական կեանքը:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

14-րդ դարում Երուսաղեմում, այդ թուում՝ Ս.Հրեշտակապետացում գրչագրում Ժողովրդից մեր կազմած ցանկում ընդգրկում են 39-ը:

Վստահաբար պետք է ասել, որ դա 14-րդ դարում գրում Ժողովրդի մի փոքր մասն է միայն, Ժողովրդի մեծ մասն ուղղակի ոչնչացել են:

Կարծես շատ չեն պահպանումները, սակայն եթե համեմատենք յետագայ դարերից պահպանում Ժողովրդի հետ, այնքան էլ քիչ չեն. 15-րդ դարում Երուսաղեմում գրում Ժողովրդից մնացել են մոտ 50-ը, 16-րդ դարից աւելի քիչ՝ մոտ 25-ը: 15-16-րդ դարերից սկսուեց օսմանեան տիրապետութիւնը (օսմանցիները Երուսաղեմը գրաւեցին 1517-ին), եւ իբրեւ դրա արդիւնք՝ հայ մշակոյթի երբեմնի ամենաանկեղծ վիճակը, Ժողովրդի հազարաւոր կորուստներն ու ոչնչացումները: Այսինքն այն, ինչ պահպանուել է 14-րդ դարից (այն գուցէ կարող էր տասնապատիկ աւելի լինել), խօսուն թիւ է:

Այս ամէնը հնարաւորութիւն է տալիս ասելու, որ Երուսաղեմը ոչ միայն հայերէն Ժողովրդի աշխարհում երկրորդ մեծ շտեմարանն է, այլ մանա՛ւ հայ գրչութեան միջնադարյան կենտրոններից մէկը:

Եւ 14-րդ դարի հայ գրչութեան խոշոր կենտրոնները թուարկելիս, այսուհետ հանգիստ խղճով պետք է խօսել մանա Երուսաղեմի ու մասնաւորապէս Ս.Հրեշտակապետաց վանքի մասին՝ իբրեւ գործնական ուղղութեան ունեցող գրչութեան կարեւոր ու արդիւնաւէտ կենտրոն:

ՑԱՆԿ

14-րդ դարում Երուսաղեմում գրում հայերէն Ժողովրդի

N	Թ.Ք.	Գրչութեան վայրը	Բովանդակութիւնը	Գրիչներ, ծաղկողներ, կազմողներ, գրչի յիշատակարաններ. Զեռագրի ներկայ գտնուելու վայրը
1.	1311	Ս.Յակոբ	Մանրութում	Գրիչ՝ Յովհաննէս Գրիչ Սանահնեցի: Այժմ գտնուելու վայրն անյայտ է:
2.	1314	Ս.Հրեշտակապետաց	Մանրութում	Գրիչ Ստեփանոս Երկայն: Յիշտկ. «Իսկ մնացորդ սորա աւարտեցի եւ անարժան եւ վերջին սուտանուն գրչակ Ստեփանոս Երկայն ի Սուրբ քաղաք Երուսաղեմ, ի վանս որ կոչի Սուրբ Հրեշտակապետ, ի խնդրոյ հոգեւոր եղբար մերոյ պատուական քահանայի կիրակոսի»: Այժմ՝ Ֆիլադելֆիայում:
3.	1316	Ս.Հրշտկ.	Ճաշոց	Գրիչ Ստեփանոս Երկայն, թուրք կոկող Կարապետ Դպիր, ստացող Դաւիթ Եպս. Երուսաղեմի, 1392 թ.-ին վերստին կազմող՝ Ստեփանոս: Յիշտկ. «Դրեցաւ սա ի Սուրբ եւ յԱծակոխ քաղաք Երուսաղեմ, ընդ հովանեաւ Սուրբ Տաճարիս որ յանուն Սուրբ եւ զարեղ Հրեշտակապետաց Միքայելի եւ Գաբրիէլի հրամանաւ եւ ծախիւք աստուածաբալ եւ հոգիւնկալ եպիսկոպոսին Երուսաղեմի տէր Դաւթի...»: ՉՍՅ 271:
4.	1321	Ս.Յակոբ	Աւետարան	Գրիչ Ստեփանոս Երկայն, Ստեփանոս Դոյնբիցանցի գաղափար ընտիր օրինակից, կազմող՝ Մատթէոս Քահանայ: Յիշտկ. «Մի՛ ոք իշխեսցէ հանել զՍուրբ Աւետարանս ի Ս.Հրեշտակապետացն, կամ գրական դնել, կամ գողանալ, կամ իւր սեպիականել, կամ յինչ եւ իցէ պետս հանել ի Սուրբ եկեղեցւոյն. այլ կացցէ մնացէ հանապազ ի վերայ սրբոյ սեղանոյն... եկեղեցւոյն»: Ըստ Թորոս Աղբար գրքի, Բ, էջ 344-46:
5.	1321	Ս.Հրշտկ.	Աւետարան	Գրիչ Ներսէս Արեղայ Կրացի, գրչագրել է Յորկցի ընտիր օրինակից՝ «Ի սուրբ քաղաք Երուսաղեմի, ընդ հովանեաւ... սուրբ Հրեշտակապետաց Միքայելի եւ Գաբրիէլի»: Զեռ. Վաշինգթոնի Կոնգրեսի, Arm. MS N4, Բանբեր Եր. մատենադարանի, 1977, ք.12, էջ 227:
6.	1321	Ս.Հրշտկ. ⁶	Նալի Մարգ	Գրիչ Ներսէս Արեղայ Կրացի:

			<i>Եւ թուղթ՝ Առաքելոց</i>	Ձեռ. Յ.Քիւրտեանի, այժմ Ի Վենետիկ:
7.	1322	Ս.Յակոբ	<i>Ժողովածոյ Եւ Գիրք Վա- յից Գրիգոր Մարաշեցիի</i>	Գրիչ Թորոս Վրդ. Գրիչ, կազմող՝ Մատթէոս (Զմշկեցի), ստացող Յակոբոս Արեւելցի: Այժմ՝ Երեսնի Մատենադարանում:
8.	1331	Ս.Հրշտկ.	<i>Ճառքնտիր</i>	Գրիչ Ներսէս Ար. Կրացի, ծաղկող Յովհաննէս Ար. Գունեցի, կազմող Մատթէոս Լուսակոն Բախանայ: Յիշտկ. «Եւ գրեցի ազատարարոյ կամօք եւ ոչ վարձու, եւ աւանդեցի Ար. Յակոբայ եկեղեցւոյն, զի կացցէ առաջի Ար. Յակոբայ...»: ՁՄՅ 282:
9.	1331	Ս.Յակոբ	<i>Աստուածա- շունչ</i>	Գրիչ Կարապետ Կրօնաւոր: Յուց. էջմ. ձեռ. 193:
10.	1331	Ս.Հրշտկ.	<i>Աստուածա- շունչ (մասնակի)</i>	Գրիչ Կարապետ Ար. Տիւրքիկեցի: Այժմ՝ Երեսնի Մատենադարանում:
11.	1332	Ս.Հրշտկ.	<i>Մեկն. Կաթ- ղիկէ Թղթոց Սարգսի</i>	Գրիչ Կարապետ Վարդապետ, ծաղկող Ներսէս, կազմող Մատթէոս Կրօնաւոր: ՁՄՅ 319:
12.	1332	Ս.Հրշտկ.	<i>Մեկն. Կաթ- ղիկէ Թղթոց Սարգսի</i>	Գրիչ Կարապետ Վրդ., ծաղկող Ներսէս, կազմող Մատթէոս Կրօնաւոր: Յիշտկ. «Գրեցաւ... առ դրան Սուրբ եւ փառաւորեալ տաճարի Քի. Ի Բաղափա յաստուածակոյս յեմա. Ի վանքս որ կոչի Հրեշտակապետ»: ՁՄՅ 299 ³ :
13.	1334	Ս.Ստեփա- նոս	<i>Ճաշոց</i>	Գրիչ Ներսէս Կրացի: ՁՄՅ 1863:
14.	1335	Ս.Հրշտկ.	<i>Ճառքնտիր- Տօնամակի ձագ</i>	Գրիչ Ներսէս Կրացի, կազմող՝ Մատթէոս Լուսակոն Բախանայ: Ձեռ. Վենետիկի թիւ 222:
15.	1336	Ս.Յակոբ	<i>Վարք Հարանց</i>	Գրիչ Յովհաննէս Գրիչ «Մարապեփեցի»: Ե.Լալայեան, Յուց. ձեռ. էջ 197-198:
16.	1339	Ս.Յակոբ	<i>Աւետարան</i>	Գրիչ եւ կազմող Յովհաննէս Գրիչ: Յիշտկ. ԺԴ դարի, թիւ 397:
17.	1341	Ս.Յակոբ ⁶	<i>Աստուածա- շունչ</i>	Գրիչ Ներսէս Կրացի: Ձեռ. Վենետիկի թիւ 17:
18.	1341	Ս.Հրշտկ.	<i>Ճաշոց</i>	Գրիչ Կարապետ Վրդ., կազմող Մատթէոս Բախանայ: Յիշտկ. «Գրեցաւ սա ի Սուրբ եւ յԱստուածակոյս Քաղաքս Երուսաղէմ, ի մեծ եւ հոգեկաւոր Վանքս որ կոչի Հրեշտակապետ, ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ Քարմատար գրչի՝ Կարապետի»: Նաեւ՝ «Յիշեցեմ ի մեղաց թողութիւն զաշխատող տառիս, որ գրեցի ազատարարոյ կամաւ եւ ոչ վարձու»: «Յիշեցեմ եւ... գրուր քնակիչս Ար. Հրեշտակապետացն»: ՁՄՅ 1255:
19.	1352	Ս.Յակոբ	<i>Քարոզգիրք Բարթողի- մեսի</i>	Գրիչ Մանուէլ Բախանայ: Եր. Մատ. 2233:
20.	1354	Ս.Յակոբ	<i>Գանձգիրք</i>	Գրիչ Յովհաննէս Արեղայ: Յուց. Հալէպի ձեռ. 119:
21.	1355	Ս.Փրկիչ	<i>Ճառքնտիր</i>	Գրիչ Ստեփանոս Երեց: ՁՅՍ 1110:
22.	1357	Ս.Հրշտկ.	<i>Աւետարան</i>	Յիշտկ. ԺԴ դարի, էջ 515:
23.	1358	Ս.Հրշտկ.	<i>Աւետարան Եւ Ճաշոց</i>	Գրիչ Տէր Աւագ Բախանայ, ստացող՝ Գրիգոր եւ Սիմէոն Կրօնաւորներ: Յիշտկ. «Գրեցաւ... Ար. Աւետարանս ի Սուրբ Բաղափա Երուսաղէմ, ի դրունս Ար. եւ փառաւոր տաճարիս Քի. Ար. Հրեշտակապետաց»: Յուց. Հալէպի ձեռ., այժմ տեղն անյայտ:
24.	1358	Ս.Յակոբ	<i>Աստուածա- շունչ</i>	Գրիչ Մարտիրոս: ՁՄՅ 1153:
25.	1360	Ս.Յակոբ	<i>Նարեկ: Կործանական</i>	Գրիչ՝ Ստեփանոս եւ Աստուածատուր Կրօնաւորներ: ՁՄՅ 1615:

³ ՁՄՅ թիւ 319 եւ 299-ը միեւնոյն գրքի երկու հատուածներն են:

26.	1360	Ս.Յակոբ	Ժողովածոյ Աւետարան	Գրիչ Ստեփանոս Կրօնաւոր: Թորոս Աղբար, Բ, էջ 437:
27.	1360	Ս.Յակոբ	Մաշտոց	Գրիչ Ստեփանոս Կրօնաւոր: ՉՍՑ 2156:
28.	1360	Ս.Յակոբ	Աւետարան	Գրիչ Գրիգոր Գ Պատրիարք Երուսաղէմի: Գտնուելու նախկին վայրը՝ Տիգրանակերտի Ս.Կիրակոս եկեղեցի, այժմ՝ անյայտ:
29.	1363	Ս.Փրկիչ	Սարգիս ճա- նեք	Գրիչ Ստեփանոս Երէց: Այս եւ 1355թ. Ճառընտիրը միացած են ՉՍՑ 1110-ում:
30.	1363	Ս.Փրկիչ	Աստուածա- շունչ	Մի մասը գրուել է Ս.Փրկիչում): Գրիչ Կիրակոս Գրիչ: Ձեռ.-ը Կտուց Անապատում էր, այժմ՝ անյայտ:
31.	1366	Երուսաղէմ	Նարեկ	Գրիչ եւ ծաղկող Վարդան Ար. Բաբերդցի Ղրիմեցի: Երեւ. Մատ. 7091:
32.	1367	Ս.Յակոբ	Աւետարան	Գրիչ Գրիգոր Ակնեցի: Եր. Մատ. 8308:
33.	1367- 1369		Ճաշոց	Գրիչ Վարդան Ար. Բաբերդցի Ղրիմեցի, գրուած է Ս.Գողգոթայի եկեղեցու համար: Յիշուկ. «Այսպէս բոլորս առ հաց եմ կերել եւ ջրիորի կրաջուր խմել եւ գրել յԵրուսաղէմս բազում վշտով»: ՉՍՑ 122:
34.	1372	Ս.Յակոբ	Աւետարան	Գրիչ Վարդան Ար. Բաբերդցի Ղրիմեցի: Երեւ. Մատ. 5557:
35.	1382	Ս.Յակոբ ⁶	Աւետարան (մասնական)	Գրիչ Գեորգ Գրիչ: Տեղը՝ անյայտ:
36.	1390	Լեոնակող- ման Ս.Յով հաննէս Կարապետ	Մաշտոց Բաղման	Գրիչ Ստեփանոս Սեբաստացի: Յիշուկ. «Արդ գրեցաւ սա ի հռչակաւոր Անապատս Լեոնակողմանս, որ է յանուն Ար. Յովհաննու Կարապետի, ձեռամբ Ստեփանոսի՝ անպիտան եւ անարուեստ գրչի»: ՉՍՑ 661:
37.	1397	Ս.Յակոբ ⁶	Ժողովածոյ	Գրիչ Կարապետ Եկեղեցացի: Երեւ. Մատ. 9309:
38.	1398	Ս.Փրկիչ	Ճառընտիր	Գրիչ Սահակ Արեղայ Ղրիմեցի, ընդօրինակել է 1318թ.-ին Դաւիթ ՊԵ-ի նուիրած ընտիր ձեռագրից, որ գրչագրել է Ստեփանոս Երկայնը: Յիշուկ. «Գրեցի յԱնապատս Սր. Փրկիչ, որ է տեղիք չարչարանաց Քի յուսոյն մեր»: ՉՍՑ 73:
39.	1399	Ս.Յակոբ	Մեկն. Կաթ- դիկէ Թղթոց Սարգսի	Գրիչ Սարգիս Պատրիարք Երուսաղէմի, ծաղկող Տաւնական Կրօնաւոր: ՉՍՑ 7:

✠ ✠ ✠

14-րդ դարի վերջերից ու 15-րդ դարի սկզբներից Երուսաղէմի հայ գրչութեան կենտրոնն աստիճանաբար տեղափոխուում է Ս.Փրկիչ եկեղեցի, այստեղ են հաւաքուում եւ ստեղծագործում գրչութեան մշակները: Ընդ որում Ս.Փրկիչի գրչական կենտրոնն աւելի կազմակերպուած եւ արդիւնաւէտ էր Ս.Հրեշտակապետացից: Այս տարողունակ թեման նոյնպէս կարիք ունի ուսումնասիրման:

ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ